ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«12» 12 2012
N 56-Ա.
օր.N

«___» _____ 2012
N
օր. N

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-Ն Գ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման» կարգի 34-րդ կետի պահանջներով՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմին կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմին մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություն (այսուհետ՝ «Ծառայություն»), իսկ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը վճարում է այդ Ծառայության դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:

1.1 Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2012թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

2.1 Ծառայության որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,

2.2 Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,

2.3 ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,

2.4 Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,

2.5 Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը չի կատարում Ծառայության դիմաց ամենամյա բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 3.4 և 3.5 կետերի:

3. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

3.1 ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,

3.2 Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,

3.3 Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

Կ/Ս 12/30
090112

3.4 Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 22.09.2011թ. N1500-Ն գ որոշման: Վճարումները կատարվում են դրամով՝ հետևյալ կերպ.

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական քաղաքային կապ	Ընդամենը
1.	ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալների աշխատասենյակ	2 x 225 000	450 000
2.	ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի աշխատասենյակ	1 x 225 000	225 000
3.	ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողով-ների նախագահների աշխատասենյակ	12 x 225 000	2 700 000
4.	կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	15 x 100 000	1 500 000
5.	ընդամենը տարեկան վարձը		4 875 000
6.	չորս միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար դրամ		

3.5 Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ամեն ամիս,

3.6 Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

3.7 ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

3.8 Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ Ազգային ժողովի առ 21.04.2010թ. N25-Ա համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

Գ. Հակոբյան

ք.Երևան 375001, Նալբանդյան 104 ԱԱԾ
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հվհհ 01507079
հ/հ 90001830019

Կ.Տ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար

Գ. Ղարիբջանյան

ք.Երևան, Բարեգամյան 19
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հվհհ 3800008519
հ/հ 900011020089

Կ.Տ.

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն հեռախոս՝ 1-99,